

# **««Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին»**

ՆԱԽԱԳԻԾ

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

### **«ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՈՂՎԱԾ 1. «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-196-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 5-րդ կետում «պետական մարմնի ուժերի,» բառերից հետո լրացնել «աշխարհագրի,» բառը.

2) լրացնել 9.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«9.1) աշխարհագր՝ քաղաքացիների կամավորության և տարածքային սկզբունքով զինված ուժերի գլխավոր շտաբի ենթակայությամբ գործող ստորաբաժանումների համալիր, որում ընդգրկված քաղաքացիները մասնակցում են Հայաստանի Հանրապետության զինված պաշտպանությանը.»:

ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի 5-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 4-րդ կետում «զարգացումը,» բառից հետո լրացնել «աշխարհագրի համակարգի ստեղծումը,» բառերը.

2) 2-րդ մասի 9-րդ կետում «ծավալման,» բառից հետո լրացնել «աշխարհագրի պատրաստության,» բառերը.

3) 3-րդ մասի 3-րդ կետում «կառուցվածքի» բառից հետո լրացնել «, աշխարհագրի կիրառումը» բառերը:

ՀՈՂՎԱԾ 3. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «համալրումը» բառից հետո լրացնել «, սույն օրենքով սահմանված կարգով աշխարհագրայինների հավաքագրումը» բառերը:

ՀՈՂՎԱԾ 4. Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Զինված ուժերի գլխավոր շտաբի ենթակայությամբ գործում է աշխարհագրը:»:

ՀՈՂՎԱԾ 5. Օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում «պատրաստության» բառից հետո լրացնել «, աշխարհագրի պատրաստության և կիրառման պլանավորումն ու» բառերը:

ՀՈՂՎԱԾ 6. Օրենքի 6-րդ գլխի վերնագրում «գորակոչը» բառից հետո լրացնել «, աշխարհագրը» բառը:

ՀՈՂՎԱԾ 7. Օրենքը լրացնել 29.1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 29.1. Աշխարհագրը

1. Աշխարհագրը Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ռազմական

գործողությունների պայմաններում Հայաստանի Հանրապետության զինված պաշտպանությանը կամավորության սկզբունքով քաղաքացիների մասնակցության համակարգ է:

2. Աշխարհագրի նպատակներն են՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը համընդհանուր և համազգային բնույթ հաղորդելը.

2) հակառակորդի դիվերսիոն կամ ահաբեկչական կամ հետախուզական կամ հատուկ օպերացիաների ուժերի և այլ գործողություններից Հայաստանի Հանրապետության տարածքի, բնակչության և ենթակառուցվածքների պաշտպանության պլանավորված միջոցառումների իրականացմանն աջակցությունը.

3) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի կիրառման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու տնտեսության օբյեկտների կենսագործունեության ապահովմանն աջակցությունը:

3. Աշխարհագրի կիրառումը ներառում է՝

1) մասնակցությունը Հայաստանի Հանրապետության սահմանների կամ հակառակորդի հետ շփման գծի վտանգված հատվածների զինված պաշտպանությանը.

2) պայքարը հակառակորդի դիվերսիոն կամ ահաբեկչական կամ հետախուզական կամ հատուկ օպերացիաների ուժերի և այլ գործողությունների դեմ.

3) մասնակցությունը հատուկ և կարևորագույն նշանակության օբյեկտների զինված պաշտպանությանը.

4) մասնակցությունը զորքերի և բնակչության զանգվածային տեղաշարժի կենտրոնական երթուղիների զինված պահպանությանը և պաշտպանությանը.

5) մասնակցությունը քաղաքացիական պաշտպանության գործընթացին:

4. Աշխարհագրի համակարգը գործում է տարածքային սկզբունքով, և ըստ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման՝ պայմանականորեն բաղկացած է զորամիավորումներից և դրանց ենթակա բրիգադներից ու գումարտակներից: Աշխարհագրի կառուցվածքը, պատրաստության և կիրառման պլանները հաստատվում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի հրամանով:

5. Աշխարհագրի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետը՝ զինված ուժերի գլխավոր շտաբի պատրաստության գլխավոր վարչությունում ձևավորված աշխարհագրային շտաբի միջոցով:

6. Աշխարհագրային զորամիավորման ղեկավարը (հրամանատարը) խաղաղ և պատերազմի ժամանակ համապատասխան տարածքային կառավարման մարմնի ղեկավարի տեղակալն է, իսկ Երևան քաղաքում Երևանի քաղաքապետի տեղակալը:

7. Աշխարհագրային բրիգադի ղեկավարը (հրամանատարը) խաղաղ և պատերազմի ժամանակ համապատասխան քաղաքային համայնքի ղեկավարի տեղակալն է, իսկ Երևան քաղաքի վարչական շրջաններում՝ վարչական շրջանի ղեկավարի տեղակալը:

8. Աշխարհագրային գումարտակի ղեկավարը (հրամանատարը) խաղաղ և պատերազմի ժամանակ գյուղական համայնքի ղեկավարի տեղակալն է:

9. Սույն հոդվածի 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով սահմանված՝ խաղաղ ժամանակ աշխարհագրային զորամիավորումների և դրանց ենթակա բրիգադների ու գումարտակների ղեկավարման կարգը սահմանվում է

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ և իրականացվում է աշխարհագրի պատրաստության ու կիրառման պլանների համաձայն:

10. Աշխարհագրային պայմանական բրիդադների և գումարտակների համալրումն աշխարհագրայիններով (այսուհետ նաև՝ աշխարհագրայինի հավաքագրում) տարածքային սկզբունքով իրականացնում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գորակոչային և գորահավաքային համալրման տարածքային ստորաբաժանումները՝ պահեստագործում հաշվառված և պատերազմական ժամանակի հաստիքների չկցագրված քաղաքացիներից, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները՝ համապատասխան համայնքում (երևան քաղաքում՝ ըստ վարչական շրջանների) հաշվառված քաղաքացիներից:

11. Աշխարհագրայինի հավաքագրման հիմքը նրա հետ կնքված պայմանագիրն է: Պայմանագիր չի կարող կնքվել այն քաղաքացու հետ՝

1) ով ենթակա է պարտադիր զինվորական ծառայության.

2) ով հանդիսանում է զինծառայող կամ փրկարար ծառայող կամ քրեակատարողական ծառայող կամ հարկադիր ծառայող,

3) որը պատիժ է կրում ազատագրկման կամ կալանքի ձևով, կամ որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում:

12. Հավաքագրված աշխարհագրայինների անվանացուցակները և կնքված պայմանագրերը ներկայացվում են աշխարհագրային շտաբ: Աշխարհագրայինին ամրակցվում է զենք, հատկացվում է համազգեստ և աշխարհագրայինը նշանակվում է համապատասխան պաշտոնի՝ աշխարհագրային շտաբի ղեկավարի (պետի) հրամանով: Աշխարհագրայիններին հատկացվող համազգեստի նկարագիրը և տարբերանշանները հաստատվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով: Աշխարհագրայիններին զենքի ամրակցման և պահպանման կարգը, կնքվող պայմանագրի օրինակելի ձևը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

13. Աշխարհագրայինների պատրաստությունն իրականացվում է պատրաստության պլանների համաձայն անցկացվող պարապմունքների և վարժանքների միջոցով՝ աշխարհագրային շտաբի ղեկավարի (պետի) հրամանով: Աշխատող աշխարհագրայինների պատրաստության և կիրառման գործընթացի վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետի պահանջները: Աշխարհագրայինները պատրաստության և կիրառման ընթացքում ապահովվում են անվճար սննդով՝ զինծառայողների համար սահմանված կարգով:»:

#### ՀՈՂՎԱԾ 8. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ՄԱՍ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերով սահմանված կարգավորումներն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 90 օրացուցային օրվա ընթացքում: